ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

Ավտոջան ՍՊԸ-ն ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱԽ-25 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի				
	ֆիրմային անվանումը	ապրանքային նշանը	մակնիշը	արտադրողի անվանումը	տեխնիկական բնութագիրը
1	.	.	.	.	Թթվածնային մեկուսիչ հակագազ (ԹՄՀ), որը նախատեսված է շնչառական համակարգը և տեսողությունը պաշտպանելու համար, աշխատում է արտաշնչած օդի վերաշրջանառությամբ՝ թթվածնով հարստանալու փակ շղթայով։ Աշխատանքի ժամանակը՝ առնվազն 240 րոպե (4 ժամ՝ համաձայն EN 145 ստանդարտի)։ Աշխատանքային ջերմաստիճան՝ –40°C-ից մինչև +60°C։ Թույլատրելի հարաբերական խոնավություն՝ մինչև 95%։ Թթվածնի մատակարարման համակարգ՝

						Թթվածնի համակցված հաստատուն հոսքի մատակարարման արագությունը՝ 1.7 ± 0.1 լ/րոպեում կախված օգտագործողի սպառումից: Դիմակի ներսի օդափոխանակությունը՝ առնվազն 80 լ/րոպե: Էլեկտրոնային ձայնային ազդանշան փակ գլանային փականներով աշխատանքի անցնելիս (ներշնչման և արտաշնչման ժամանակ): Սարքի կառուցվածքը՝ սարքի իրանը պատրաստված է հակաստատիկ և ջերմակայուն նյութից: Սարքի չափսերը՝ առավելագույնը՝ 595 × 450 × 195 մմ: Սարքի քաշը՝ առավելագույնը՝ 16 կգ: Թթվածնի բալոնի աշխատանքային ճնշումը՝ առնվազն 19 ՄՊա: Բալոնի ծավալը՝ առնվազն 2 լիտր (գազի ծավալ՝ առնվազն 500 դմ³): Թթվածնի բալոնի նյութը՝ ալյումինե (համապատասխան ISO 7866 ստանդարտին) կամ մետաղակոմպոզիտային (մետաղապլաստ՝ համապատասխան EN 12245), բալոնի փականը պետք է համապատասխանի EN 144

						ստանդարտին: Կափույրի ապահովիչի գործարկման միջակայքը՝ 1.2–2 ՄՊա: Կափույրի նվազագույն ճնշման միջակայքը՝ 80–400 Պա: Մատակարարման հավաքածուի պարունակությունը՝ TMS (ստանդարտ մոդուլային հավաքածու) հավաքածուն պետք է ներառի՝ ամրագոտիներ, պանորամային դիմակ (180° դիտման անկյուն) EN 136 ստանդարտին համապատասխան՝ EPDM (Էթիլպռոպիլենային կաուչուկ), թթվածնի բալոն ≥2 լ, ≥200 մթն, քիմիական ածխաթթու գազի կլանիչ, ներշնչման և արտաշնչման խողովակներ, թոքային ավտոմատ, կափույրներ (ապահովիչային, ներշնչման/արտաշնչման), ճնշման կարգավորման համակարգ, եթե աշխատում է սառույցով ապա ներառի սառույցի տարաներ, շնչառական պարկ՝ ոչ պակաս 5 լ տարողունակությամբ, ներկառուցված կլանող փամփուշտ՝ քիմիական CO_2 կլանիչով (պետք է ներառված լինի առնվազն մեկանգամյա օգտագործման քիմ.

						կլանիչ նյութով), ճնշման նվազեցման փական, ճնշման չափիչ և էլեկտրոնային ձայնային մոնիթորինգի համակարգ (EN 837) իր լիցքավորիչով: Իրանը և կառուցվածքային բաղադրիչները պետք է պատրաստված լինեն հարվածադիմացկուն, վիբրացիաներին, կոռոզիային և ջերմային ազդեցությանը դիմացկուն նյութերից: Ապակե գոլորշիացնող սարք, զսպանակներ, ամրակներ և անվտանգության գոտիներ, ներծծման փամփուշտ, տեխնիկական տվյալների թերթիկ և շահագործման փաստաթղթեր, գործարանային պիտակավորված փաթեթավորում: Սարքի շահագործման ժամկետը ոչ պակաս 10 տարի: Երաշխիքային պարտավորություններ՝ արտադրանքի երաշխիքային ժամկետը պետք է լինի առնվազն երկու տարի՝ շահագործման հանձնման օրվանից մինչև երաշխիքային սպասարկման ժամկետի ավարտը: Երաշխիքային ժամկետի ընթացքում մատակարարող

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

Ավտոջան ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀ ՆԳՆ ԷԱՃԱՊՁԲ-2026/ԱՄՍ-25 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар				
	фирменное наименование	товарный знак	марка	наименование производителя	Технические характеристики
1					

կազմակերպությունը պարտավորվում է շտկել բոլոր խափանված մասերի և սարքերի անսաքությունները: Երաշխիքային սպասարկումը ներառում է սարքավորումների (ԹՄՀ) ապարատի բոլոր մասերի և սարքերի ֆունկցիոնալության ստուգում, պնևմատիկ սարքերի/մասերի փոխարինում և սպասարկման փաստաթղթերի տրամադրում: Մատակարարվող սարքավորումները պետք է համապատասխանեն վերը նշված ստանդարտներին: Մատակարարման պահանջները՝ սարքը պետք է մատակարարվի իր սկզբնական, կնքված և պիտակավորված փաթեթավորմամբ: Պետք է կցվի արտադրողի կողմից տրված համապատասխանության վկայական: Մատակարարը ապրանքը նախապես պետք է համաձայնեցնի պատվիրատուի հետ, իսկ մատակարարելուց ապրանքի բեռնաթափումը իրականացնի իր ուժերով: Կցված նկարը կրում է տեղեկատվական

					բնույթ: Մատակարարը պետք է ներկայացնի հավաստագիր կամ իրավազորման նամակ արտադրողից: